ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումն առարկայի դասավանդման ընթացքում:

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Բերբերյան

Ուսումնական հաստատություն՝ 118 ավագ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
2. ԳԼՈՒԽ 1. Գրականության դասաժամերին սովորողների արժեհամակարգի ձևավորումը
3. ԳԼՈՒԽ 2. Արժեհամակարգի ձևավորումը գրական միջոցառումների շնորհիվ
4. ԳԼՈՒԽ 3. Գրական հեղինակների նամակները որպես արժեհամակարգի ձևավորման միջոց
5. ԳԼՈՒԽ4. Եզրակացություն
6. ԳԼՈՒԽ5.Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր Հայաստանի Հանրապետության պաետական չափորոշչում կարևոր տեղ է գրավում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:
Արժեքները և դրանց ձևավորումը յուրաքանչյուր առարկայի գծով պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ընդունվում է բավական լայն շառավիղով: Արժեհամակարգի ձևավորման համար անփոխարինելի դեր ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում արժեքների ձևավորման առումով բավական մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկայի դերը, առավել ևս՝ լեզվի և գրականության դերը:

Սովորողները, հաճախելով դպրոց, հայտնվում են մի վայրում, որտեղ ձեռք են բերում գիտելիքների պաշար: Նրանք ուսման ընթացքում իրենց համար առանձնացնում են սիրելի և առավել հետաքրքիր առարկաները: Բնականաբար, ուսուցիչն առարկան դասավանդելիս պետք է այնպես կազմակերպի, որ այն դառնա և՛ սիրելի, և՛ հեշտ ընկալվող: Դրա համար հարկավոր է առարկան մատուցել այնպիսի մեթոդով, որը հնարավորություն կտա սովորողին իր ընդունակության սահմաններում լիարժեք յուրացնել նյութը:
Գոյություն ունեն մի շարք մեթոդներ տվյալ առարկան սովորողին հասանելի դարձնելու համար: Կարևոր է ճիշտ մեթոդիկա ընտրելը, որպեսզի տվյալ առարկան ոչ միայն հասանելի լինի, այլև ավելի հետաքրքիր և սիրելի դառնա սովորողի համար:

Ինչպե՞ս անել, որ սովորողի մոտ տվյալ առարկայի վերաբերյալ առաջանա հետաքրքրություն: Իմ փորձից ելնելով՝ կարող եմ վստահեցնել, որ թեման սովորելուց բացի կարևոր է նաև, որ սովորողը կարողանա սովորեցնել իր սովորածը: Տարիներ շարունակ աշխատելով դպրոցում՝ նկատել եմ, որ հատակապես գրականության ուսուցիչներն են կանգնում այնպիսի խնդրի առջև, ինչպիսին է երեխաներին ստիպել կարդալ:

Իսկ որո՞նք են պատճառները, որ սովորողները չեն սիրում կարդալ և շատ հաճախ կարդում են ոչ թե սիրով և հետաքրքրությամբ, այլ պարզապես անհրաժեշտությունից դրդված. չէ՞ որ գրականությունն այն առարկան է, որ ոչ միայն գիտելիքով է ապահովում, այլ հաճելի անհրաժեշտություն է:

Անդրադառնալով այս հարցին՝ նշեմ չկարդալու հիմնական երեք պատճառները:

Առաջինը - Շատ սովորողներ չեն սիրում կարդալ, քանի որ դեռ մանկուց նրանց մեջ չի սերմանվել գրքի և ընթերցանության նկատմամաբ սեր, չունեն փորձ հեշտ և արագ ընթերցելու տվյալ գիրքը:

Երկրորդ - Սովորողը չի կարողանում միանգամից ընկալել տվյալ գրական նյութի բուն իմաստը, որը գիտական տերմինով նշանակում է մտավոր արգելք:

Երրորդ - Սովորողների միջև տեղի չի ունենում համապատասխան քննարկում գրական թեմայի շուրջ:

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Սովորողը կարողանա արժևորել գրականության դերը, ինքնաճանաչման, հասարակության հետ հարաբերությունների կառուցելու գործում:
- Բացատրի գրական կերպարների հոգեբանակն զարգացումը, ներքին և արտաքին կոնֆլիկտները և դրանց լուծումները:

ԽՆԴՐԻՆԵՐ

- Արժեհամակարգի յուրացումը օգնում է սովորողի մոտ ձևավորել հայրենասիրության, մշակութային արժեքների, գիտական նվաճումների զգացումը:
- Գրականություն առարկայի ուսուցման ժամանակ ուսուցչի համար խնդիր է դառնում սովորողի ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Գնահատի հայ գրականության իմացությունը որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման ազգային մշակութային արժեքների գնահատման կարևոր պայման:
- Գիտակցի, որ ինքը հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդն է և դրսևորի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման և փոխանցման գործում:

ԳԼՈՒԽ 1. Գրականության դասաժամերին սովորողների արժեհամակարգի ձեւավորումը:

խոսքի զարգացում, նոր նյութի կամ հեղինակի բացահայտում, հոգու և մտքի ներդաշնակություն, ճաշակ, աշխարհընկալում: Այս բոլորն այն պարտադիր կարողություններն են, որ պետք է ունենա յուրաքանչյուր սովորող գրականություն առարկան ուսումնասիրելիս:

Գրականության՝ իբրև ուսումնական առարկայի անգնահատելի արժեքը դրսևորվում է հենց նրանով, որ ուսուցումն ուսուցչի և ուսումը սովորողների համար դառնում են գեղեցիկ ու անջնջելի տպավորություններով լի մի իրողություն:

Ո՞րն է գրականության դասավանդման նպատակը և նրա գլխավոր խնդիրն այսօր մեր իրականության մեջ: Այդ խնդիրը հայ, և առհասարակ, գրականությանը ծանոթացնելն է, ծանոթացնել նաև մեր ժողովրդի պատմական անցած ճանապարհին, նրա խոսքի դարավոր մշակույթին և հոգևոր աշխարհին:

Մեծարժեք երկերի ուսումնասիրության միջոցով պետք է սովորողի մեջ արթնացնել սեր նրա հանդեպ, բացահայտել ազնիվ զգացմունքներ և կրթել գեղեցիկի հանդեպ ճաշակ ու հարստացնել սովորողների բառապաշարը:

Ուսուցչի ճիշտ և նուրբ, խորը և խելամիտ դասավանդման դեպքում գրականությունը դառնում է հետաքրքիր առարկա, որով սովորողը զբաղվում է նաև դասերից հետո՝ տանը և գրական խմբակներում: Սակայն այդ ամենն ավելի մեծ հետք է թողնում սովորողների մտքի և հոգու վրա միջոցառումների, էլեկտրոնային դասերի և ֆիլմերի դիտումների շնորհիվ:

Ոչ ոք չի ժխտի այն փաստը, որ սովորողները գրական ստեղծագործություններից շատերին ծանոթանում, սովորում և քննարկում են դասարանում՝ ուսուցչի օգնությամբ: Հարկավո՞ր է, արդյոք, պարտադրել, որ ծրագրային բոլոր նյութերը կարդացվեն նախօրոք: Ո՛չ, հարկավոր չէ: Կարող են լինել նույնիսկ այնպիսի երկեր, որոնց թերևս ավելի լավ կլիներ սովորողներն առաջին անգամ ծանոթանային հենց ուսուցչի ընթերցանությամբ (արտահայտիչ ընթերցանության դեպքում): Այդ կարող է վերաբերել քնարական բնույթի ոչ մեծածավալ ստեղծագործություններին թե՛ չապածո, թե՛ արձակ: Իսկ մեծածավալ սեղծագործություններն անպայման պետք է

աշակերտները կարդան նախապես: Բայց ի՞նչ անել, եթե սովորողներից ոչ բոլորն են կարդացել հանձնարարված գրական գործը:

Ուսուցիչը կարող է դիմել տարբեր հնարների՝ սովորողի մեջ հետաքրքրություն առաջացնելու տվյալ գործը կարդալու համար:

Ուզում եմ ներկայացնել մի դաս, որը ևս մի միջոց է սովորողներին խթանելու կարդալ գրական ստեղծագործությունը: Կներկայացնեմ Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը: Դասարանում վիպակը կարդացել էին ընդամենը մի քանի հոգի: Նախ սովորողներին ներկայացրի դասի թեման: Հանձնարարվեց վիպակը կարդացած երեխաներին հակիրճ պատմել սյուժեն և կառուցվածքը:

Անշուշտ, հաջորդ քայլը պետք է լիներ կերպարները բնութագրող վերլուծական աշխատանքը և վիպակի գաղափարը՝ ընկալելու և հասկանալու նրա բուն իմաստը: Որպեսզի բոլորն ընդգրկվեն գրական գործի քննարկմանը, կազմակերպեցի վիպակի հիման վրա նկարահանված ֆիլմի դիտում: Այն դիտեցինք հաջորդ գրականության դասին (երկու դասաժամ), հատուկ լսարանում: Կինոդիտումը խթան էր, որն էլ հետո շատերին ստիպեց ընթերցել բնագիրը:

Հաջորդ գրականության դասաժամին տեղի ունեցավ բուռն քննարկում, որին մասնակցում էր ողջ դասարանը: Յուրաքանչյուրը հայտնում էր իր կարծիքը՝ յուրովի մեկնաբանելով մաթևոսյանական արտահայտությունները և նկարագրությունները: Տրվեցին կերպարներին բնութագրող բնորոշ հարցեր: Տղաները յուրովի մեկնաբանեցին Սիմոնի կերպարը, իսկ աղջիկները մտան հետաքրքիր բանավեճի մեջ: Աղունին բնութագրելիս՝ զուգահեռներ անցկացնելով 21 դարի ժամանակակից կնոջ հետ: Այնուհետև սովորողների միջև տեղի ունեցավ թեժ քննարկում, կարծիքներ այսօրվա խնդիրների և վիպակում առաջ քաշված այլ հարցերի շուրջ: Արդյունքում դասարանի բոլոր սովորողները ներգրավվեցին դասապրոցեսի մեջ և մեծ հետաքրքրությամբ գրեթե բոլորն արտահայտեցին իրենց կարծիքները: Կարողացա հասնել նրան, որ շատենրն ընթերցեցին բնագիրը կամ բնագրից կարդացին այն հատվածները, որոնք իրենց մոտ առավել մեծ տպավորություն էին թողել:

Նաև առաջացավ ցանկություն, որ հնարավորության դեպքում սովորողների մի խումբ մեկնի վիպակի գործողությունների կատարման վայրը: Այդ միջոցով ավելի շոշափելի կլինի նրանց զգացողությունները, ավելի հասկանալի գյուղի և քաղաքի ընկալումը:

Իհարկե, շփումը գյուղում ապրող մարդկանց, նրանց հոգսերի, նրանց աշխարհայացքի, մաթևոսյանական աշխարհի բացահայտումը ավելի կմոտեցնի հասկանալու գրողի ստեղծագործության նպատակը, խնդիրները, վերջնարդյունքը:

Ահա հենց այսպիսի դասերի միջոցով հնարավոր է հետաքրքրությունը մեծացնել ընթերցանության նկատմամբ: Նմանատիպ դասերն օգնում են սովորողի մտքի և խոսքի զարգացմանը և հեղինակին ավելի լավ ճանաչելուն: «Աշնան արև» վիպակի ամբողջական քննարկումից և վերլուծությունից հետո սովորողներին հանձնարավեց Մաթևոսյանի մեկ այլ գործի՝ «Նարնջագույն զամբիկ» պատմվածքի հիման վրա ստեղծել ֆիլմի փոքրիկ սցենար: Բնականաբար, աշակերտների մոտ առաջացավ մեծ հետաքրքրություն և ոգևորություն:

Հստակ կարող եմ ասել՝ հենց նման դասժամի միջոցով սովորողների մոտ հետաքրքություն է առաջանում ոչ միայն ստույգ հանձնարարված ստեղծագործության, այլ հենց բուն հեղինակի նկատմամբ: Նրանք ինքնակամ սկսում են ուսումնասիրել հեղինակի այլ աշխատանքներ: Կարդալուց հետո դասից դուրս զրույցի են բռնվում ընթերցած նյութի վերբերյալ: Իզուր չի ասել մեծ Թումանյանը, որ դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը:

Սովորողներին տրվեց ուսումնասիրել պատմական ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական իրադարձությունների ճիշտ ընկալումը:

Նմանատիպ դասերը, բնականաբար, սովորողի մոտ առաջացնում է հետաքրքրություն դասի սահմաններից դուրս գալու և ավելի հետաքրքիր դարձնելու իր առօրյան:

Կարծում եմ՝ դրան կարող է նպաստել գրական միջոցառումները:

Գրական միջոցառումների միջոցով բացահայտվում է սովորողի կարողությունների, արժեհամակարգի ձևավորման հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 2. Արժեհամակարգի ձեւավորումը գրական միջոցառումների շնորհիվ

Գրական միջոոցառումները յուրաքնչյուր սովորողի համար շատ կարեւոր է դիտել տարբեր կողմերից:

Նախ՝ միջոցառման մասնակիցները կարող են լինել դպրոցի տարբեր դասարանների, տարբեր նախասիրությունների և տարբեր սեռի սովորողներ: Այդ

ընթացքը (նյութի ընտրություն, փորձեր, խոսքի մշակում, երաժշտության ընտրություն, գեղարվեստական ձևաորում) նրանց ակամայից տանում է գեղեցիկ ու ուսանելի աշխարհ: Սովորողների մեջ ավելի խորանում և անմոռանալի է դառնում տվյալ նյութի վերաբերյալ իմացությունը: Շատ կարևոր է նաև, որ դասերից հետո ազատ ժամերին նրանք զբաղված են լինում այդ հետաքիքիր, մի քիչ բարդ, բայց զգացմունքային դաշտում՝ ապրելով մեծ ոգևորություն: Յուրաքանչյուրին համակում է իրեն կարևոր զգալու հաճելի զգացողությունը: Տարբեր դասարաններում սովորողների մոտ միմյանց հանդեպ դրսևորվում են հանդուրժողականություն, մտերմություն և իրար օգնելու ցանկություն:

Միջոցառումների կարևոր կողմերից մեկն էլ ճաշակի ձևաորումն է: Կարևորում են բարոյական շատ արժեքներ, որոնք մինչև այդ տեղ չունեին նրանց գիտակցության մեջ: Առաջանում է կոլեկտիվ աշխատելու թիմային մտածելակերպը, որով ավելի հետշությամբ է հաղթահարվում աշխատանքի ընթացքում առաջացած որևէ խնդիր:

Մեր դպրոցում կազմակերպված յուրաքանչյուր միջոցառում ցույց է տալիս, որ նրանում ներգրավված երեխաները մեծ ոգևորությամբ և սիրով են մասնակցում տարվող աշխատանքներին: Ամենօրյա նույն միապաղաղ ու դժվար դասաժամերից բացի այս աշխատանքը նրանց թարմացնում է և հետաքրքիր դարձնում առօրյան:

Բայց ամենագայթակղիչն ու ոգևորողը քրտնաջան աշխատանքի ավարտն է՝ միջոցառումը հանդիսատեսի դատին ներկայացնելու օրը. բեմ կամ սրահ, միջոցառման ավարտի վերջին հնչյունները, հուզմունք, ներների և ուսուցիչների ծափեր, ժպիտներ, շնորհավորանքներ... Նրանց կյանքում մի անջնջելի հիշողություն... Իսկ հանդիսատեսի համար, լինի ուսուցիչ, թե աշակերտ, միջոցառումից ստացած տպավորությունն օրը դարձնում է սովորականից տարբեր, հոգին՝ վեհացնող, իսկ միտքը՝ կրթող: Ծափեր, քննարկումներ, ոգևորություն. յուրաքանչյուրն ինչ-որ բան է բացահայտում իր համար: Արժևորվում է այս կամ այն մասնակցի լավ կամ վատ ելույթը: Ինչևէ, ինչպես գրական յուրաքանչյուր երկ, սա էլ ավարտվում է իր վերջակետով: Փակվում է վարագույրն՝ ակնկալելով նոր ու կարևոր գործերի ստեղծում:

Նաև կարծում եմ, որ սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների

համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը:

ԳԼՈՒԽ 3. Գրական հեղինակների նամակները որպես արժեհամակարգի ձեւավորման միջոց:

Այժմ անդրադառնանք դասական հեղինակներից մեկի նամակներին եւ նրանց միջոցով ավելի լավ բացահայտենք տվյալ հեղինակային:

Գրականություն առարկան դասավանդելիս՝ սովորողների համար շատ կարևոր է նաև նրանց ավելի հանգամանորեն ծանոթացնել դասական այն հեղինակների նամակներին, որոնք գրական մեծ արժեք են ներկայացնում: Դրանք օգնում են սովորողին ավելի լավ ճանաչել նրանց ոչ միայն որպես գրողի, այլ նաև որպես անհատի: Նամակների ընթերցանությունը ակամայից խթան է հանդիսանում սովորողի համար կարդալու կամ ծանոթանալու տվյալ գրողի ստեղծագործությանը: Ցանկանում եմ ներկայացնել Վահան Տերյանի սիրային նամակներից որոշ պատառիկներ:

Բանաստեղծական մեծ արժեք ունեն Տերյանի նամակները: Դրանց մեջ տեսնում ենք բանաստեղծի կյանքը, ապրումներն ու գրական հայացքները: Պետք է նշել, որ բանաստեղծի նամակները ոչ միայն գրականության պատմության առումով են արժեքավոր, այլ նաև դրանց արժեքն առավել մեծ է հայ գեղագիտական մտքի, գեղագիտության տեսության համար: Տերյանը բանաստեղծ է իր ամբողջ էությամբ: Նրա բոլոր նամակները գրված են բանաստեղծական շնչով, տեղ-տեղ արձակ բանաստեղծության տպավորություն են գործում: Այդ նամակներում Տերյանը դրսևորում է քնարերգու բանաստեղծի, մեծ հայրենասեր գրողի բոլոր հատկությունները: Երբ խոսքը հայրենիքի, հարազատ ժողովրդի, նրա մշակույթի, գրականության խնդիրների մասին է, նրա նամակներում երևում են գրողի տագնապը, սրտացավությունն ու անկեղծությունը (կարելի է ասել քնարերգուի բոլոր հատկությունները): Նա հայրենասեր բանաստեղծ է, երբ նամակներ է հղում Ալ. Ծատուրյանին, Ավ. Իսահակյանին, Ս. Խանզադյանին, Հ. Թումանյանին: Նուրբ քնարերգու է, երբ այդ նամակները հղում է Անտինկա և Մարթա Միսակարյաններին:

Մեջբերենք Թումանյանին հասցեագրված նամակից մի փոքր հատված:

-Ձեր «Մերոնք» խորագրի տակ տպագրվող էսքիզները այստեղ շատ հավանեցին, թե ուրիշները, թե մենք, և եթե դրանցից մի երկուսը մեզ ուղարկեիք, անչափ շնորհակալ կլինեինք: Սակայն, իհարկե, Ձեր ցանկությանն է վերապահված ինչ ուղարկելը: Ընդունեցեք ջերմ բարևս ու անկեղծ հարգանքս:

Նամակ հասցեգրված Ավետիք Իսահակյանին

-Դու հայ բանաստեղծների մեջ իմ ամենասիրելի բանաստեղծն ես՝ քո անհատական լիրիկայով, ահա թե ինչու ես չգիտեմ ինչպես հայտնեմ քեզ իմ շնորհակալությունը, թե գիրքդ հրատարակելուդ և թե ինձ հիշելուդ համար: Դու գիտես ինքդ, թե որքան եմ հարգում քեզ իբրև մարդ և բանստեղծ, այնպես որ ավելորդ է այստեղ ընդարձակ խոսելը: Գիրքդ կարդալուց ես անմիջապես մի ցանկություն զգացի՝ քեզ այստեղ տեսնելու:

Եվ ահա նամակագրության այս փոքրիկ պատառիկներից երևում է հայրենասեր բանաստեղծի խորին հարգանքն ու սերը մեծ գրողների հանդեպ:

Այժմ ներկայացնեմ նրա սիրային նամակներից մի քանիսը:

Տերյանի նամակը Ան. Միսկարյանին.

«Ձեր նամակը ստացա և կարդալով երկար ժամանակ տրտում եմ ինչ-որ տարօրինակ տրտմությամբ: Դա մի տեսակ մեղմ, համակերպված, հեզ, թերևս նույնիսկ ուրախագին թախիծ է, որը մեր մեջ ծնվում է, երբ անձնատուր ենք լինում հուշերին կամ երբ լսում ենք լավ, տխուր երաժշտություն: Այդ թախծի ժամանակ քեզ ազատ ես զգում և ոչնչի համար չես ափսոսում: Այնպես տխուր ու լավ է: Եվ մեկ էլ Ձեր նամակում մի նախադասություն կար. «Ես մեռած եմ, միայն իմ մարմինն է ապրում»»:

Վահան Տերյանի նամակները կարդալիս տեսնում ենք բանաստեղծի բնավորության շատ գծեր: Նա իր շփումների մեջ ազնիվ էր, պարզ ու մաքուր: Քնարական բանաստեղծի նամակները հետազոտողին օգնում են գտնելու բանաստեղծի ստեղծագործության հիմքը: Հրատարակված է բանաստեղծի ավելի քան երկու հարյուր նամակ՝ հասցեագրված երեք տասնյակից ավելի անձանց: Շատ ուշագրավ են այն նամակները (շուրջ 62 նամակ), որոնք Տերյանը գրել է Անթառամ Միսկարյանին: Նամակները կարելի է համարել նամակագրական ժանրի առանձին մեծ արժեք ունեցող ստեղծագործություն: Նրա սիրային նամակները գրված են այնպիսի

խորությամբ ու նրբությամբ, գեղեցիկ և անկեղծ տողերով, որ կարող ենք դրանք ներկայացնել որպես արձակ բանաստեղծություններ: Առանձնացնենք նրա սիրային նամակներից մեկը, որն էլ կարող ենք զուգահեռ անցկացնել «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի մի քանի բանաստեղծությունների հետ, որոնք հավանաբար գրել է նույն տրամադրությամբ, նույն հոգեվիճակում եղած ժամանակ:

Նամակ Մարթա Միսկարյանին.

«- Մի՞թե մենք կհանդիպենք: Մի՞թե կմտերմանանք երբևէ:

Եթե ես սիրեի... մի տեսակ քարացել է հոգիս: Սառել է:

Անկամ ու հոգնած:

Գարունն այստեղ աշնան պես է:

Անձրև ու անձրև:

Տխրություն:

Մենակություն: Մշտապես:

Մենք բոլորս այդպես ենք: Տա Աստված, որ ուժգին սիրեք, ում որ սիրում եք:

Սիրուց լավ բան չկա:

Անձրև է: Ցեխ: Միայնություն:

«Հեռավորություն: Ի՜նչ սարսափելի հեռավորություն: Մարդ կարողանար սպանել այս միայնությունը: Տա Աստված, որ ուժգին սիրեք... Հանդիպում ես, ծանոթանում, բաժանվում: Հավիտենական շրջապտույտ և հոգումդ վերստին դատարկություն է ու միայնակություն:

Եվ թախիծ: Ինձ թվում է, թե ես մեռնում եմ...»:

Նամակը կարդալիս՝ ակամա հիշում ենք «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից «Աշնան մեղեդի» բանաստեղծությունը.

Աշուն է, անձրև... Ստվերներն անձև,

Դողում են դանդաղ... Պա՛ղ, միապաղաղ

Անձրև՛ ու անձրև՝...

Սիրտս տանջում է ինչ-որ անուրախ անհանգստություն...

Երբեմն ինձ համար անպես ծանր է լինում, որ իմ հոգին ընդունակ է մի այնպիսի մաքրության, որի մասին «ողջախոհ խելոքներն ու խելոքուհիները» հասկացողություն իսկ չունեն: Նամակի այս տողերը կարող են մեզ հիշեցնել «Ցնորք» բանաստեղծության հետևյալ տողերը.

«Ինձ չես սիրում, ուրիշին,

Ուրիշին ես սիրում դու

Եվ անզոր է ու չնչին

Քո դեմ տանջանքն իմ հոգու:

Կարծես թե հարութուն եմ առնում, բայց հարություն եմ առնում մի տեսակ կյանքով, ապրում եմ ինչ-որ այլ տեսակի զգացմունքներով՝ սրված ու նուրբ, ես կասեի «Երաժշտական» զգացմունքներով: Ահա այդ պահերին զգում են, որ հարկավոր է երաժշտություն, և միայն երաժշտությունը կարող է արտահայտել դա: Չէ՞ որ հոգին ինքը երաժշտություն է, և միևնույնն է, հոգին մեռած է, թե կենդանի: Եվ ինձ թվում , թե չկա օբյեկտիվ երաժշտություն: Երաժշտությունն իմ հոգին է, որին ինչ-որ հրաշքով լսում եմ: Իսկ եթե երաժշտության մեջ ես չեմ լսում իմ հոգին, նշանակում է, որ դա արդեն երաժշտություն չէ»:

Իմ խաղաղ երեկոն է հիմա

Մեղմալույս և և տխուր և անուշ.

Քեզ երբեք սիրտս չի մոռանա,

Իմ մաքուր, առաջին իմ անուրջ...

Տերյանը Անտիկա Միսկարյանին նամակներում դիմում էր Անտյա անունով: Նամակներից մեկը գրել է Նոր Տարվա նախօրեին, որի մեջ կար այնքան քնքշանք, լույս ու ոգևորություն, միևնույն ժամանակ տխրություն ու բաժանման թախիծ:

«Ես տխուր եմ, ես միշտ տխուր եմ լինում, երբ գալիս են տոների ու համընդհանուր ուրախությունների հանդիսավոր օրերը: Հիմա արև եմ ուզում, Անտյա, ավելի շատ լույս: Երաժշտություն եմ ուզում և գուրգուրանք: Ուզում եմ լինել փոքրիկ-փոքրիկ, որպեսզի

ինձ փաղաքշեն ու սիրեն, ինչպես սիրում ու փաղաքշում են միայն մանուկների: Ի՞նչ ուրախ էր բաբախում սիրտս, ինչպե՜ս էր թրթռում լուսավոր օրվա սպասումից: Հիմա ես ոչինչ չեմ սպասում, էլ չեմ սպասում այս օրերին: Ընդհակառակը, կարծես թե սիրում եմ գորշ առօրյան... Անսահմանորեն տխուր եմ: Խոհեր: Տրտում խոհեր: Բայց ինչու՞ եմ գրում Ձեզ դրա մասին: Ինչու՞ եմ վշտացնում տխուր խոսքերով»:

Նամակն ընթերցելիս՝ ակամայից արտաբերում ենք բանաստեղծություններից մեկի տողերը.

Չարտասանված տխուր խոսքեր,
Որ դողում եք անպատասխան,
Ես սիրում եմ, տխուր խոսքեր,
Ձեր թրթիռը կախարդական:

Դուք այրում եք, սիրո խոսքեր,
Կարոտիս պես սիրտըս մորմոք
Ձեզ չի գգվի, տխուր խոսքեր,
Ցուրտ աշխարհում ո՛չ ոք, ո՛չ ոք...

Մարթա Միսակյանին հասցեագրված նամակներից մեկի տողերը հիշեցնում են «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի առաջին բանաստեղծությունը՝ «Տխրություն»-ը:

Ախ, նորից այս տաղտկալին, աշնանային հնազանդն ու մորմոքունը, սիրտ ճմլողը: Հավերժորե՞ն, հավերժորե՞ն:

Ուզում եմ, որ երբ մեռնեմ, և շուրջս մահվան լռությունը տիրի գերեզմանիս վրա, հանկարծ, բայց աննկարագրելի երաժշտություն հնչի, որ ճերմակ շորերով մի աղջիկ բերկրալից, խաղաղ տրտմությամբ լի, մի եղանակ նվագի, պայծառ անմոռուկներ, ինչպես լուսավոր տխրության և մեղմ ուրախության մեղեդի:

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիկ շոյելով...

Տերյանի նամակներն իրենց ջերմությամբ, զգացմունքների անկեղծությամբ, խորությամբ իսկական գեղարվեստական ստեղծագործություններ են, հաճելի և ուսանելի ընթերցանության նյութ: Այս հատկությունները բարձրացնում են Տերյանի

նամակների գրական արժեքը, դրանք դասում նամակային գրականության լավագույն նմուշների շարքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօրվա սովորողը և մանկավարժը պետք է հասկանա, որ անհրաժեշտ է ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն հմտութայն ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին:

Դրանք են՝

- Լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի:
- Դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի և փոքրերի հետ:

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով, արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը:

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի և արժեքավոր բան հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարկում մատաղ սերունդին:

Կրթության ողնաշարը, կրթության առանցքն արժեհամակարգն է:

Մանկավարժը պետք է սեփական օրիանակով դաստեարակի սանին, օրինակ ծառայի, քանի որ օրինակի ուժը զորավոր է:

Մեր հանարային վսեմ իդեալները՝ մարդկայնությունը, ընկերասիրությունը, փոխադարձ նվիրվածությունը, գեղեցկի պաշտպամունքը թող զորավիկ լինեն ամեն տեսակի արատները արմատախիլ անելու համար մղվող կռվում:

Եվ առօրյայի եռուզեռի մեջ չմոռանանք հանճարեղ Վահան Տերյանի պատգամը.

«Չկամենանք շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը, հոգու և մտքի հպարտությամբ ճոխացնենք նրան»:

Մեր դպրոցական ողջ գործունեությանը, մեր ուսուցչության ջանքերին գումարենք ծնողների, հասարկության բոլոր խավերի աջակցությունը՝ սովորողների մեջ միշտ արթուն պահելու այսօրվա արժեհամակարգի կարևորությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տերյան Վ., Երկերի ժողովածու, Հատոր III, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1975

2. Տերյան Վ., Երկերի ժողովածու, Հատոր I, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1975

3. Աթայան Ռ., Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, «Լույս» Հրատարակչություն, Երևան, 1974

4. Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը:

5. Ն. Մանասյան, արժեքային համակարգը, «Մանկավարժություն» վերլուծական ամսագիր, 2004թ.